

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ
Փաստաբան

ՀԱՅՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածը նվիրված է դատարանների կողմից հայցի ապահովման կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցին:

Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման իրավունքը գործին մասնակցող անձի, որի դեմ անհիմն կիրառվել են հայցի ապահովման միջոցներ, իրավունքների պաշտպանության լավագույն միջոցներից է: Գտնում ենք, որ գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել են հայցի ապահովման միջոցներ, բոլոր այն դեպքերում, երբ այդպիսի կիրառումը կճանաչվի անհիմն, պետք է իրավունք ունենաներ կայացնել հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց: Հոդվածում կատարված վերլուծության արդյունքում առաջարկվել է փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հայցի ապահովումը կարգավորող հոդվածներում:

Հիմնարարներ – հայցի ապահովում, վնասների հատուցում, քաղաքացիական դատավարություն:

Հայցի ապահովումը օրենքով նախատեսված դատավարական միջոցների համակցություն է, որի նպատակն է գործով կայացվելիք վերջնական դատական ակտի կատարման երաշխավորումը: Այս դատավարական ինստիտուտը կոչված է դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել գործին մասնակցող անձի իրավունքները և օրինական շահերը: Դրանով իսկ այն ուղղված է անձանց խախտված իրավունքների իրական ու ամբողջ ծավալով վերականգնելուն: Հիմնական խնդիրն, որն առաջանում է հայցի ապահովման միջոցներ կիրառելիս, գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի հավասարության պահպանումն է, քանի որ հայցի ապահովման միջոցների կիրառումը հանգեցնում է հակառակ դատավարական կողմի իրավունքների սահմանափակմանը, իսկ որոշ դեպքերում նաև՝ վերջինիս համար նյութական վնասների առաջացմանը:

Գործին մասնակցող անձը, որի դեմ անհիմն կիրառվել է հայցի ապահովում, կարող է վերականգնել իր խախտված իրավունքները՝ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելով, ինչը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածով նախատեսված իրավունքների պաշտպանության ձևերից մեկն է: Վնասների տակ, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի, հասկացվում է՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կո-

րուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը: Ըստ նույն հոդվածի 1-ին մասի՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասը ևս սահմանում է, որ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ այն պատճառած անձի կողմից լրիվ ծավալով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Օրենքով կարող է նախատեսվել վնասի հատուցում՝ վնաս պատճառողի մեղքի բացակայությամբ:

Հայցի ապահովման կիրառման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման իրավական կարգավորումները տրված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով, համաձայն որի՝ գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսել է վնասների փոխհատուցման իրավունք նաև այն

դեպքերում, երբ այդպիսի վնասներ են առաջացել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու հետևանքով:

Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցումը հայցի ապահովման կապակցությամբ գործին մասնակցող անձի շահերի պաշտպանության դատավարական միջոցներից է: Այն ավանդական է հայրենական քաղաքացիական դատավարության համար և նախատեսված է եղել դեռևս 1923թ. ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմնուքներին համապատասխան ընդունված ՀՍԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում և դրանից հետո ընդունված բոլոր քաղաքացիական դատավարության օրենսգրքերում: Գործող օրենսդրությամբ փոփոխվել է միայն այդպիսի հայց ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, եթե նախկինում այդպիսի իրավունքով օժտված էր միայն պատասխանողը, ապա գործող օրենսդրությունը այդ իրավունքը վերապահել է բոլոր այն անձանց, որոնց դեմ կիրառվել են հայցի ապահովման միջոցներ: Օրենսդիրի նման մոտեցումը համարում ենք հիմնավոր, քանի որ նախկին քաղաքացիական դատավարությամբ սահմանված դրույթի համաձայն՝ նման հայց կարող էր ներկայացնել միայն պատասխանողը, որը խախտում էր կողմերի իրավահավասարության սկզբունքը: Օրինակ՝ իր դիմումի համաձայն՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերությունը ներգրավվել է որպես երրորդ անձ թիվ ԵՄԳ/0425/02/13 քաղաքացիական գործի շրջանակներում: Հետագայում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության հանդեպ նշված գործի շրջանակներում, կիրառվել է հայցի ապահովման միջոց, որը հետագայում «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ ընկերության ներկայացուցչի միջնորդության հիման վրա վերացվել է, սակայն մինչ այդ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲ-ն դիմել է դատարան՝ ընդդեմ իր հանդեպ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացրած կողմի՝ «Արտադրա-տպագրական» ՓԲ-ի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասների հատուցման պահանջով: Դատարանը 31.07.2014թ. թիվ ԵՄԳ/1613/02/13 վճռով բավարարել է հայցը, սակայն հետագայում այս վճիռը բեկանվել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից հետևյալ պատճառաբանությամբ՝ «...ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանողին է իրավունք վերապահում հարուցել հայց նույն Դատարան ընդդեմ հայցվորի՝ հայցի ապահովմամբ պատճառված

վնասների հատուցման պահանջով...»¹: Այսպիսով, գործին մասնակից դարձած երրորդ անձը նախկինում գրկված էր հնարավորությունից՝ պահանջել հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասների հատուցում: Ներկայումս չկա որևէ սահմանափակում հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակում:

Սույն հոդվածում քննարկելու ենք հայցի ապահովմամբ գործին մասնակցող անձի մոտ առաջացած վնասների փոխհատուցման հետ կապված խնդրահարույց հարցերը:

Հայցի ապահովման կիրառման հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման հարցը կարգավորող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման պարտադիր վավերապայմաններ են հանդիսանում՝

1. Հայցի ապահովման կիրառման պատճառով գործին մասնակցող անձի մոտ վնասների առկայությունը:

2. Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է ՀՀ քաղ. դատ. օր.-ի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքերով: Հայցի նախնական ապահովման կիրառման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայց ներկայացնելու համար նշված իրավական հիմքերից բացի նշված է նաև այն դեպքը, երբ սահմանված ժամկետում հայցվորի կողմից հայց չի ներկայացվել դատարան:

3. Հայցի ապահովման կիրառման և վնասների առաջացման միջև պատճառահետևանքային կապի առկայությունը:

Նշված վավերապայմաններից որևէ մեկի բացակայությունը, ըստ օրենսդրի տրամաբանության, պետք է հիմք հանդիսանա հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցման պահանջի մերժման համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի կարգավորումները գործնականում կարող են առաջացնել հետևյալ խնդիրները.

1. Օրենսդիրը հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավունքի առաջացման համար պարտադիր է համարում դատարանի օրինական ուժի մեջ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մտած դատական ակտի առկայությունը, որով հայցը մերժվել է, թողնվել է առանց քննության կամ գործի վարույթը կարճվել է: Գտնում ենք, որ այս դրույթը սահմանափակում է վնասներ կրած անձի իրավունքը ստանալ փոխհատուցում այն դեպքերում, երբ հայցի ապահովումը կիրառվել է անհիմն, սակայն չկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ, որով հայցը մերժվել է կամ թողնվել է առանց քննության կամ կարճվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով, օրինակ՝ եթե հայցի ապահովման միջոցները վերացել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով. այն է՝ եթե բացակայում են հայցի ապահովման միջոց կիրառելու հիմքերը և հայցի ապահովման ընթացքում անձը կրել է ֆինանսական կորուստներ, ապա ըստ գործող օրենսդրության՝ այն ենթակա կլինի հատուցման միայն այն դեպքում, երբ հայցը մերժվի կամ կարճվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածով նախատեսված հիմքերով:

Անհրաժեշտ ենք համարում փոփոխություն կատարել գործող օրենսդրության մեջ և հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավական հիմքերը լրացնել հետևյալ կերպ՝ «Գործին մասնակցող անձը կամ այլ անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, իրավունք ունի հայցադիմում ներկայացնելու նույն դատարան՝ ընդդեմ հայցի ապահովման միջոց պահանջած գործին մասնակցող անձի՝ հայցի ապահովմամբ իրեն պատճառված վնասները հատուցելու պահանջով, եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ներկայացված հայցը մասնակի կամ ամբողջությամբ մերժվել է, թողնվել է առանց քննության, գործի վարույթը կարճվել է սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ, 7-րդ կամ 11-րդ կետերով նախատեսված հիմքով կամ **հայցի ապահովման միջոցը վերացվել է սույն օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հիմքով**»: Նշենք, որ միջազգային իրավական փորձի համեմատական վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ անձը պետք է ունենա հնարավորություն ստանալ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցում բոլոր այն դեպքերում, երբ կիրառված հայցի ապահովումը հետագայում կճանաչվի անհիմն կամ կիրառված հայցի ապահովման միջոցները դատարանի որոշմամբ կվերացվի: Այսպես օրինակ՝ Ֆինլանդիայի դատական օրենսգրքի 11-րդ բաժնի 7-րդ գլուխը նախատեսում է,

որ, եթե հայցի ապահովման միջոցի կիրառումը հետագայում ճանաչվի անհիմն, հայցի ապահովում կիրառող կողմը մյուս կողմին պարտավորվում է վճարել փոխհատուցում ցանկացած վնասի համար, որը պայմանավորված է հայցի ապահովման կիրառմամբ, ինչպես նաև կողմի կրած այն ծախսերը, որը նա կատարել է հայցի ապահովման միջոցի օրինականությունը վիճարկելու համար²: Ամերիկայի Միացյալ Նահանգներում օրենսդրական մակարդակով ամրագրված է, որ անձինք ովքեր վնաս են կրել իրենց հանդեպ հայցի ապահովման միջոցներ կիրառելու հետևանքով, իրավունք ունեն այդ վնասների հատուցման՝ անկախ գործով կայացվող վերջնական դատական ակտի: Այսպես, հայցի ապահովման հետ կապված ընդհանուր դրույթները սահմանված են Քաղաքացիական դատավարության դաշնային կանոնների 65-րդ կանոնով: Ըստ այդ հոդվածի՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող կողմը հատուցում է հակառակ կողմին բոլոր նրա ծախսերն ու վնասները, եթե նրա հանդեպ կիրառվել է անհիմն հայցի ապահովման միջոցներ: Համաձայն նույն հոդվածի՝ հայցի ապահովման միջոցները համարվում են անօրինական կիրառված. «...եթե անձը իրավունք ունենար անել այն, ինչն արգելվել է նրան անել»: Իսպանիայի քաղաքացիական դատավարության մասին օրենքի 745-րդ հոդվածով սահմանվում է, որ, եթե դատարանը որոշում է կայացնում հօգուտ պատասխանողի կամ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու և վարույթի կարճման՝ բոլոր կիրառված հայցի ապահովման միջոցները (inter partes) վերանում են, և պատասխանողի միջնորդությամբ որոշում է կայացվում, պատասխանողի կողմից հայցի ապահովման միջոցների կիրառման հետ կապված՝ կրած ցանկացած վնասների վերաբերյալ⁴: Այսպիսով, այս պետությունների քաղաքացիական դատավարության օրենսդրության ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու համար պարտադիր վավերապայման է համարվում հայցի ապահովման կիրառման անհիմն ճանաչվելը, սակայն ոչ հայցապահանջի մերժումը:

2. ՀՀ վճարել դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը⁵: Մեկ այլ որոշմամբ՝ ՀՀ վճարել դատարանը որոշել է, որ ՀՀ քաղաքա-

ցիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի հիմքով, ընդհանուր առմամբ վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ հայցվորի մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայության, պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառող անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է պատասխանող կողմը⁶։ Նշված որոշումները չեն վերաբերում հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման գործերին, սակայն դատարանները հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցապահանջներ քննելիս, ևս ղեկավարվում են նշված նախադեպային որոշումներով։ Այսպես, ՀՀ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը, քննելով թիվ ԵԱԲԴ/2268/02/13 քաղաքացիական գործն ըստ հայցի Գ.Ասլիբեկյանի ընդդեմ «Վահմեր» ՍՊԸ-ի, հանգել է այն եզրակացության, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի և 1058-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ. «...վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը։ Ընդ որում՝ նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման»⁷։ Տվյալ պարագայում, հարց է առաջանում՝ արդյոք դատարանների նման մոտեցումը համապատասխանո՞ւմ է օրենքին, ի՞նչ փաստեր են ենթակա ապացուցման հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցերի քննության ժամանակ, և ինչպե՞ս է բաշխվում գործին մասնակցող անձանց միջև այդ փաստերի ապացուցման բեռը։ Ըստ գործող ընդհանուր կանոնի՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պարտավոր է ապացուցել իր պահանջների և առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը, եթե այլ բան նախատեսված չէ սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով։ Այսպիսով, ակնհայտ է, որ հայցվորը պետք է ապացուցի իր մոտ իրական կամ բաց թողնված օգուտի տեսքով վնասների առկայու-

թյունը, վնասների և հայցի ապահովման միջոցների կիրառման պատճառահետևանքային կապի առկայությունը։ Ինչ վերաբերում է վնաս պատճառողի արարքի անօրինական լինելու հանգամանքի ապացուցմանը, ապա տվյալ պարագայում, այն ենթակա չէ քննարկման, քանի որ պատճառված վնասը հետևանք է դատական ակտի կատարման։ Այս առումով պետք է արձանագրել, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը համակարգային կապի մեջ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 3-րդ մասի հետ, ըստ որի՝ օրինաչափ գործողություններով պատճառված վնասը հատուցվում է օրենքով նախատեսված դեպքերում։ Ինչ վերաբերում է վնաս պատճառողի մեղքի առկայության կամ բացակայության հանգամանքի ապացուցմանը, ապա տվյալ պարագայում, այդ հարցը ևս ենթակա չէ քննարկման, քանի որ վնասը պատճառվել է ոչ թե հակաօրինական գործողությունների, այլ օրինաչափ գործողությունների հետևանքով։ Նմանատիպ կարծիք են արտահայտում նաև հայ և ռուս դատավարագետները, որոնք նշում են, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցի քննության շրջանակներում ապացուցման առանձնահատկություններից է այն հանգամանքը, որ հաշվի չի առնվում հայցվորի մեղավորության փաստը։ Նշվածի պատճառն այն է, որ վնասի հատուցման հայց ներկայացնելու իրավունքը առաջանում է օրենքի ուժով⁸։ Այսպիսով, հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման գործերով հայցվորի կողմից ապացուցման են ենթակա միայն՝ վնասների առկայության, չափի, ինչպես նաև վնասների և հայցի ապահովման միջոցների կիրառման պատճառահետևանքային կապի առկայության փաստերը։

3. Հաջորդ հարցը, որին կցանկանայինք անդրադառնալ հետևյալն է՝ արդյոք կարելի՞ է ներկայացնել հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց բոլոր այն գործին մասնակցող անձանց հանդեպ, ովքեր անհիմն միջնորդություն են ներկայացրել հայցի ապահովում կիրառելու վերաբերյալ։ Օրինակ՝ քաղաքացիական գործի շրջանակներում, եթե հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ անհիմն միջնորդություն է ներկայացնում դատախազը, և դրա հետևանքով անձը կրում է վնասներ, արդյոք նա իրավունք ունի՞ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնել, և ո՞ւմ դեմ է ներկայացվելու նման հայցը (ինչպես հայտնի է քաղաքացիական դատավարությունում պետական շահերի պաշտպանությանն առնչվող գործերով դատախա-

www.ardaradutyjournal.com

զը կարող է հայց ներկայացնել):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-1064-րդ հոդվածների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ քաղաքացուն կամ իրավաբանական անձին հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը: Դատախազը հայց ներկայացնելով և հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելով՝ հանդես է գալիս պետության անունից, պետական շահի պաշտպանության նպատակով՝ կատարելով պետության կողմից իրեն վերապահված պաշտոնական գործառույթը: Այսպիսով, հայցի ապահովմամբ անձի խախտված իրավունքները նման պարագայում ենթակա են փոխհատուցման պետական բյուջեից: Ինչպես դատախազի դեպքում, ով քաղաքացիական դատավարությունում հանդես է գալիս որպես պետության ներկայացուցիչ, այնպես էլ լիազորագրով քաղաքացիական դատավարությունում հանդես եկող գործին մասնակցող ներկայացուցչի դեպքում, հայցի ապահովմամբ պատճառված վնասի հատուցման հայցը ներկայացվում է ոչ թե ներկայացուցչի այլ՝ գործին մասնակցող անձի դեմ: Ուստի, գործին մասնակցող անձի իրավունքների պաշտպանության նպատակով, առաջարկում ենք փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասում, լրացնելով այն հայցի ապահովման միջնորդություն ներկայացնելու իրավունքը, որպես ներկայացուցչի հատուկ լիազորություն, որի մասին լիազորագրում պետք է լինի ուղղակի նշում:

4. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը կարող է, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով, գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ հայցի ապահովման միջոցներ ձեռնարկել՝ արգելափակել ստեղծագործությունների, տվյալների բազաների, հնչյունագրերի կամ տեսագրությունների ենթադրվող նմանակված բոլոր օրինակների, ինչպես նաև դրանց ստեղծման և վերարտադրման համար նախատեսված նյութերի ու սարքավորումների վրա, արգելել որոշակի գործողությունների կատարումը: Այսպիսով, այս օրենքը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասին, որը հայցի ապահովման միջոցների կիրառում թույլատրում է միայն գործին մասնակցող անձանց միջնորդության հիման վրա: Տվ-

յալ պարագայում, հեղինակային իրավունքի վեճերի քննության ժամանակ օրենսդիրը թույլատրում է հայցի ապահովման կիրառում նաև դատարանի նախաձեռնությամբ: Հարց է առաջանում՝ եթե անձը կրել է վնասներ դատարանի նախաձեռնությամբ իր հանդեպ կիրառված հայցի ապահովման հետևանքով, ապա ում դեմ է ներկայացվելու վնասների հատուցման հայցը: 1964 թ. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը պարունակում էր դրույթ, համաձայն որի՝ եթե հայցի ապահովումը կիրառվել է դատարանի նախաձեռնությամբ, ապա այս դեպքերում անձը չի կարող ներկայացնել հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց: Նշվածը պայմանավորված էր այն հանգամանքով, որ ըստ այդ օրենսգրքի հայցի ապահովում կարող էր կիրառվել նաև դատարանի նախաձեռնությամբ: Հակասություններից խուսափելու, հայցի ապահովման կիրառման հարցերում միասնական մոտեցում ձևավորելու նպատակով, հետևելով քաղաքացիական դատավարության դիսպոզիտիվության սկզբունքին՝ առաջարկում ենք փոփոխություններ կատարել «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում՝ **վերացնելով դատարանի նախաձեռնությունը հայցի ապահովման կիրառման հարցում:**

Այսպիսով, սույն հոդվածում քննարկեցինք կիրառված հայցի ապահովման դեմ պաշտպանության իրավունքներից մեկը՝ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայց ներկայացնելու իրավունքը: Գործին մասնակցող անձը, որի դեմ կիրառվել է հայցի ապահովման միջոց, հատկապես, եթե ներկայացվել է անհիմն հայց, հայտնվում է դատավարության մյուս մասնակիցների հանդեպ անբարենապաստ վիճակում, քանի որ հայցի ապահովման կիրառումը կապված է նյութաիրավական սահմանափակումների հետ, ինչի պատճառով անձը կարող է կրել նյութական վնասներ: Հայցի ապահովման միջոցներ կիրառելիս գործին մասնակցող անձի շահերի պաշտպանությունը կարող է իրականացվել հետևյալ դատավարական միջոցների շնորհիվ՝

1. հայցի ապահովման վերացում,
2. հակընդդեմ ապահովում,
3. հայցի ապահովման հետ կապված վնասների հատուցում,
4. հայցի ապահովման վերաբերյալ դատական ակտերի բողոքարկում:

Նշված միջոցները կոչված են ապահովել դատավարության իրավահավասարության սկզբունքը, որը բխում է ՀՀ քաղաքացիական դատավար-

րության օրենսգրքի 11-րդ, 13-րդ հոդվածներից, համաձայն որոնց՝ գործին մասնակցող բոլոր անձինք հավասար են օրենքի և դատարանի առջև: Նշված դատավարական նորմերը համապատասխանում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 7-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածներին, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածին, որոնք ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ևս հանդիսանում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցումը անհիմն հայցի ապահովման միջոցների արդյունքում խախտված իրավունքների վերականգման կարևորագույն իրավունքն է, որը թեպետ հազվադեպ է կիրառվում գործին մասնակցող անձանց կողմից: Հնարավոր է, որ հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման իրա-

վունքից չօգտվելը կապված է այս ոլորտում լայնածավալ ուսումնասիրությունների և դատական պրակտիկայի միասնականության բացակայության հետ:

Մեր համոզմամբ, սույն հոդվածում կատարված ուսումնասիրության արդյունքում առաջադրված օրենսդրական առաջարկները, ինչպես նաև մեկնաբանությունները իրական հնարավորություն կստեղծեն իրավակիրառողների համար հայցի ապահովմամբ պատճառված վնասների հատուցման հայցի ներկայացնելու իրավունքից ավելի հաճախ օգտվելու համար, ինչը և կնպաստի դատավարության մասնակիցների իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ամրապնդմանը ՀՀ քաղաքացիական դատավարությունում:

¹ Տե՛ս, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 09.04.2015 թ. որոշումը թիվ ԵՄԳ/1613/02/13 քաղաքացիական գործով: https://www.finlex.fi/fi/laki/kaannokset/1734/en17340004_20150732.pdf

² Տե՛ս, Ֆինլանդիայի դատավարության օրենսգիրք: Code of Judicial Procedure (1734).

³ Տե՛ս, ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոններ: Federal Rules of civil procedure. <https://www.mjusticia.gov.es/es/AreaTematica/DocumentacionPublicaciones/Documents/Law%2012000%20of%207%20January.pdf>

⁴ Տե՛ս, Իսպանիայի քաղաքացիական դատավարություն: Spanish Civil Procedure Act.

⁵ Տե՛ս, Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀԲԴ-3/0016/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

⁶ Տե՛ս, «Մասնա-Մանան» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Դանիել Ղասաբողյանի՝ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2009թ. թիվ ԵԲԴ/0086/02/08 որոշումը:

⁷ Տե՛ս, թիվ ԵԱԲԴ/2268/02/13 քաղաքացիական գործի նյութեր:

⁸ Տե՛ս, Ս. Մեդրյան Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020, էջեր 29-30: Медведев И.Р. О возмещении убытков, причиненных обеспечением иска // Арбитражный и гражданский процесс. 2015. N 8. С. 39-40.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:
3. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների համընդհանուր հռչակագիր:
4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
6. 1923 թ. ՀՄԽՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
7. Հայկական ՄՍՀ 1964 թ. քաղաքացիական դատավարության օրենսգիրք:
8. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
9. Ֆինլանդիայի դատավարության օրենսգիրք Code of Judicial Procedure (1734):
10. Դատավարության օրենսգիրք: Code of Judicial Procedure (1734).
11. ԱՄՆ քաղաքացիական դատավարության դաշնային կանոններ: Federal Rules of civil procedure.
12. Ս. Մեդրյան Հայցի ապահովումը քաղաքացիական դատավարությունում: Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2020:
13. Медведев И.Р. О возмещении убытков, причиненных обеспечением иска // Арбитражный и гражданский процесс. 2015. N 8:

www.ardaradutyjournal.com

Լուսինե Տարգսյան
 Адвокат

РЕЗЮМЕ

*Вопросы возмещения убытков причиненных обеспечением
 иска в гражданском судопроизводстве РА*

Статья посвящена вопросу возмещения ущерба, причиненным обеспечением иска.

Право на возмещение ущерба, причиненного обеспечением иска, является одним из лучших средств защиты прав лица, участвующего в деле, к которому необоснованно применены меры по обеспечению иска. Считаем, что лицо, участвующее в деле, к которому применены меры по обеспечению иска, во всех случаях, когда такое применение признано необоснованным, должно иметь право предъявить иск о возмещении убытков, причиненных обеспечением иска. В результате проведенного анализа в статье было предложено внести изменения в статьи Гражданско-процессуального кодекса Республики Армения, регулирующие обеспечение иска.

Ключевые слова: обеспечение иска, возмещение убытков, гражданский процесс.

Lusine Sargsyan
 Advocate

SUMMARY

*The issues of compensation for damages caused by usage
 of provisional remedy in civil procedure code*

The article is devoted to the issue of compensation for damage caused by the usage of provisional remedies by the courts. The right of persons participating in the case for compensation for damages which is caused by the usage of provisional remedies against whom was unjustly used provisional remedy is one of the best methods to protect rights.

We consider that the person participating in the case against whom was used provisional remedies, when that kind of usage will be recognized as unjust in all cases should have the right to file a claim of compensation for damages caused by the usage of provisional remedies.

Key words: provisional remedy, compensation for damage, civil procedure.

Բնագիրը ներկայացվել է 13.08.2021թ.

Ընդունվել է տպագրության 18.11.2021թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Դավթյանը